

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄՇԱԿ

Հ Ի Մ Ն Ա Կ Ի Բ Գ Ի Բ Գ Ի Բ Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ք օ ն № 253.

Ոմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ է Ք օ ն № 253.

ՄՇԱԿ ԼՐԱԳԻՐԸ

Մարտի 1-ից մինչև տարվայ վերջը կար-
ծեալ իՆՆ ռուբլի:

Գիտել Тифлисъ, редакция „Мшакъ“.
Այն անձինք, որոնք վճարել են մինչև
մարտի 1-ը և ցանկանում են շարունակել
լրագիր ստանալը, թող հոգ տանեն վա-
ղորօք յայտնելու այդ մասին խմբագրու-
թեանը, որպէս զի լրագրի առաքումը
չընդհատվի:

Ապագիկ բաժանորդագրութիւն չէ ըն-
դունվում:

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

Հակաթորախտային ցուցահանդէս. Լազու-
նեան թերակղզում. — Ներքին ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.
Նամակ Մուկիայից. Երբքին լուրեր. — ԱՐՏԱ-
ՔԻՆ, ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Պատերազմի շուրջը. Ար-
տաքին լուրեր. — ՀԵՌԱՄԻՆԵՐ. — ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ. «Ինչ շատ
հարուստ ես»:

ՀԱՎԱՌՈՒՄԱՅԻՆ ՅՈՒՅԱՀԱՆԻՒՄ

Այսօր, մարտի 3-ին, Թիֆլիսում բաց-
վում է մի ուսանելի ցուցահանդէս, որը
նպատակ ունի ցոյց տալ, թէ ինչ
մեծ փաստեր է տալիս մարդկութեանը
թոքախտը և թէ ինչ միջոցներով
հնարաւոր է մաքաւել ժողովրդական այդ
մեծ աղէտի դէմ:

Մենք մի քանի անգամ առիթ ենք ու-
նեցել խօսելու թորախտի կատարած սար-
սափելի մեծ աւերակների մասին և հիմն-
ված վիճակագրական հետազոտութիւննե-
րի վրա յայտնել ենք, որ նա այնքան ա-
ւելի է տարածվում և զարգանում, որ-
քան աննպաստ են ժողովրդի անդառու-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

«ԳՈՒ ՇԱՀԱՐՈՒՍ ԵՍ» Պատմումք

Ձմեռ է. դեկտեմբեր ամի մի ցուրտ երե-
կոյ: Քամին մանչալով, շաղ է տալիս անցորդ-
ների վրա սառցախտան ձիւնի փոքր գնդակ-
ներ: Վաղ, վաղ. նա մտնում է նրանց վի-
թարկուների տակ, բարձրացնում, դող գցում
մարմնի մէջ, յանկարծ կանգ առնում մի քայլի,
նորից մտնում, նորից ձիւն շաղ տալիս, նո-
րից վզվզում:

Մտացախտան ձիւնի փաթիլները խփում են
լուսամուտների ապակիներին: Մութը սկսել
է պատել սենեակը, բայց Ներսէս Ասողկեան
ընդամուտը չէ վառում, ինչպէս թեան համար,
այլ, կանգնած լուսամուտի առաջ, նայում է
փողոցին, առանց ոչինչ տեսնելու, կամ ա-
կանջ է դնում քամու մոնչիւնին և կամ, նրա-
տելով տախտի վրա, գլուխը առնելով երկու
ձեռների մէջ, մտածում է:

Իսկ մտածողութիւնները դառն են, տան-
ջող յուսահատական:

Ներսէս Ասողկեանը դեռ շատ երիտասարդ
է, հազիւ 20 տարեկան. և. Հոգևոր դպրոցի
վերջին դասարանի աշակերտ է և մի քանի
ամիս յետոյ պէտք է աւարտէ ուսումը ու
վկայական ստանայ: Լինելով շինական աղքատ
ընտանիքի դուստի, նա ամբողջ մի բանի տա-
րի մասնաւոր գասերով, արտագրութիւններով
կարողացել է և ուսում ստանալ և իրան պի-
նել. դեռ երբեմն-երբեմն պարուս մօրն էլ մի-
մի գունաւոր թաշկենակ, կամ բրդէ շալ նուէր
ուղարկել: Բայց վերջին տարին հանգամանք-
ները խիստ աննպաստ կերպարանք ստացան
նրա համար. դասեր չը կարողացաւ ձարել,
թողիկ դպրոցից զարգացելու տալ և նրա
ապրուստի միակ միջոցը արտագրութիւններն
էին, որոնք հազիւ տալիս էին նրան ամսա-
կան 8—10 ռուբլի: Միւս կողմից, վերջին

թիւնը և առողջապահական պայմանները:
Եւ ընդհակառակը՝ ինչ աստիճանով բար-
ւորվում են մարդկանց կենցաղավարու-
թեան պայմանները, այնքան էլ պակա-
սում է թորախտի ոյժը մի երկրի մէջ:
Այնտեղ, ուր մարդիկ ստիպւած են ապ-
րել խոնաւ բնակարաններում, վատ
օդի մէջ, զրկված լոյսից և տաքու-
թիւնից, կարօտ ոչ միայն վայելուչ,
այլ երբեմն և անհնարաւոր մտնուղի,
ճշգրտաբար ընտանեկան ծանր հոգսերի
տակ, զուրկ հոգեկան և բարոյական
միջոցառումներից, այնտեղ թորախտը
գտնում է իր զարգացման համար նպաս-
տաւոր հող և վերցնում է բազմաթիւ
գոհեր յաճախ մարդկանց ամենամատղ
հասակում:

Ներկայ ցուցահանդէսը կարող է կա-
տարել մի մեծ յարանի դեր և տալ ա-
ռատ նիւթ ծանօթանալու այն առաջա-
դիմութեան հետ, որ արել են բժշկական
գիտութիւնը և ժողովրդագրութիւնը թոք-
ախտը հարածելու կարևոր գործի մէջ:
Մենք շատ կը ցանկանայինք, որ մեր
հասարակութիւնը լուրջ ուշադրութեամբ
վերաբերվեր ներկայ ցուցահանդէսին և
օգտվեր նրա ցուցումներից կազմակեր-
պելու մի շարք ձեռնարկութիւններ, որ-
պէս զի մեր երկրի մէջ բուն դրած է
մեծ քանակութեամբ գոհեր տանող թոք-
ախտը կարելիին չափ սահմանափակել
իր գոհերի թիւը և պահպանել երկրի
համար նրա ազգաբնակչութեան կեանքը:

ԼԱՕԿՈՒՆԵՆ ԹԵՐԱԿԱԶՈՒՄ

Այսօրվայ հեռագիրներին մէջ մեր ըն-
թերցողները կը կարգան հեքուում այն
լուրերի դէմ, որոնք տարածված են Զի-

տարին լինելով, նրա դասարանական գրադ-
մունքները կրկնապատկիլ էին:
Եւ նա դեռ երազում էր շարունակել ու-
սումը, ձգտում էր մտնել համալսարան, գի-
տութեան բարձր տաճարները...

Անձրեղ շարունակում էր թակել ապակի-
ները. Ներսէսի հոգին աւելի և աւելի մտալ-
վում էր:

Որտեղից գտնել փող սենեակի վարձը վճա-
րելու: Այսօր, նա վերջին քառասուն կոպէկը
տուել էր և գնել մի քիչ շաքար, մի քիչ թէյ
և հաց. դրանով նա կը բաւականանայ մինչև
վաղը, բայց նա խոտտացել է պարուս Աննա-
յին անպատճառ վճարել այսօր սենեակի վար-
ձը 5 ռուբլի: Դիմել ընկերներին, բայց ճիշդ
նա մինչև այդ օր դեռ ոչ չէր գիտել. նա
միշտ հպարտացել է նրանով, որ ոչ ոքի չէ
գիտել, ապրել է իր աշխատանքով: Դիցուք,
կարելի է ընկերին գիտնել, այդտեղ ոչինչ ա-
մօթալի և նուստատուցել ըստ չը կայ, բայց,
առաջին, ընկերները նրա պէս աղքատ աշա-
կերաններ են, երկրորդ, չէ՞ որ պէտք է վերա-
դարձնել. ճրտեղից պէտք է վերադարձնել,
իսկ չը վերադարձնել, կը նշանակէ մուրալ,
աղքատութիւն անել, ուրիշը բերանի թիւքան
խել:

Եւ ամօթից Ասողկեանը զգաց դէմքի շառա-
գունելը:

Դիմել հարուստներին՝ նպաստ խնդրել. բայց
միթէ այդ ևս մուրացականութիւն չի լինի.
վերջապէս, ինչպէս հասնել մինչև այդ հա-
րուստներին, ով կը բանայ նրա առաջ նրանց
տան դռները:

Ներսէսը սարուս զգաց, կարծես ցրտից,
կը յիշէր իր ընկեր Միքայէլին պատահած
դէպքը: Միքայէլը լի յոյսով գիտնել էր հա-
րուստներից մէկին, որ յայտնի էր իբրև բա-
րերար, բայց ծառան կուտաբար վճարել էր
նրան ասելով. «Երբիք, կորիք, ապաի գահէն
տարաք, նա որտեղ է այլ ևս ոչ ոքին չըն-
դունել»:

Դիմել ուսուցիչներին: Ներսէսը հաստա-

նաստանում այն բանի մասին, թէ եապո-
նացիները գրաւել են Պօրտ-Արտուրը:

Սուս լուրեր այս վերջին շաբաթնե-
րում շատ և շատ անգամ են հանդէս ե-
կել. ուստի և պէտք է մեծ զգուշութեամբ
վերաբերվել հեռագրական հարորդագրու-
թիւններին և սպասել մինչև պաշտօնա-
կան ծանուցումները յայտնեն սեղի ու-
նեցած եղելութիւնների մասին:

Այսօրվայ հեռագիրների մէջ կարևոր
կարող է համարվել այն, որ ասում է,
թէ վերսվարի լոյս 27-ի գիշերը եապո-
նական նաւերը լուսաւորում էին Հեղի-
նէի ծովախորշը և Սէնիւչէնի հանդիպա-
կաց պար: Իս նշանակում է, թէ եապո-
նացիները սեղ են որոնում ափ իջնելու:
Սակայն դեռ տեղեկութիւն չը կայ, թէ
արդեօք իջնել են նրանք արդէն ափ
թէ ոչ:

Մենք մեր նախորդ յօդուածներում հե-
ռագիրների հիման վրա սակ էինք, որ
եապոնացիները, օգտվելով իրանց զինուո-
րական նաւատորմի գրահակիրների պաշտ-
պանութիւնից, ձգտում են զօրք անցկաց-
նել չինական ափերի մօտով դէպի Լաօ-
զունեան ծոցը և նրան ափ իջնելու Իս-
կուտի կամ ծովազրի մի ուրիշ կէտում:
Այդ կէտերի շարքում կարող է լինել և
Հեղինէի ծովախորշը, որի մասին յիշում
են հեռագիրները: Այդ ծովախորշը գտնու-
մում է Լաօզունի թերակղզու արևմտեան
ափում և մօտ է այն երկաթուղային գը-
ծին, որ կապում է Պօրտ-Արտուրը Մուկ-
իէնի հետ: Անկասկած, եթէ թշնամի զօր-
քերը կարողանան տեղեր գրաւել և ամուր
զինքեր բռնել երկաթուղային գծի մօտ,
նրանք կարող են մեծ հոգս պատճառել
Պօրտ-Արտուրի բանակին: Բայց յայտնի է,
որ ուսաց զօրքերը մեծ հսկողութիւն
ունեն բոլոր ափերի վրա և մինչև այժմ

ցած է, որ նրանց մէջ կան այնպիսիները, ո-
րոնք անկեղծ կարեկցութեամբ կը վերաբը-
վեն իրան, կօչեն, բայց ինչպէս խիղճ անել.
չէ՞ որ նրանք էլ ընտանիքի տէրեր են, հազիւ
կարողանում են ծայրը ծայրին հասցնել: Վեր-
ջապէս Տօ ամեն ժամանակ չէ՞ կարելի դիմել
նրանց:

Ուրեմն դիմել ծնողներին: Ներսէսը յիշէր
իր բարի մօր արտասուաթոր դէմքը, կը ա-
մառք, գիւղից մեկնելիս, պաշար խորջրին
մէջ դարսելիս, ասում էր. «Ներսէս ջան, տես,
երբ նեղութեան մէջ ընկնես, կը փող չունե-
նաս, խիղի գրի ինձ. մեր մի հատիկ կուր
կը ծախիմ, քեզ փող կը հասցնիմ. մենք եօր
կը գնանք մի կերպ հօրդ հետ, միայն թէ դու
նեղութիւն չը քաշես»: Պաշտելի մայր. նա
հաւատացած է այժմ, որ իր հոգու հատոր
Ներսէսը ոչ մի բանի պէտք չունի. դեռ մի
շաբաթ առաջ նա գրեց մօրը, հաւատացնելով,
որ դասեր շատ ունի և լաւ ապրում է և դեռ
խոտտացաւ պարտիկի ձեռնարկ համար մի
բոլոր տար շալ ուղարկելու: Այժմ ինչպէս վա-
խեցնել նրան. ինչպէս զրկել ծերունի ծնող-
ներին իրանց հոգեպահիկից կամ այն մի հա-
տիկ կովից, որի կաթը նրանց միակ մտնուցն
է: Ոչ, ոչ, այդ անկարելի է. պէտք է ուրիշ
հնար գտնել, ուրիշ կը մտածել: Նորից պէտք
է հետամտել դասեր գտնելու: Բայց չէ՞ որ
ամբողջ երկու ամիս որոնում է, հետամուտ է
և ոչինչ չէ գտնում:

Սաւաւրը բողբոլիւն ծածկել էր սենեակը.
անձրեղ չէր դադարում դուրսը և նրա կա-
թիլները շարունակում էին ծեծել ապակիներ-
ը: Ներսէսը վեր կացաւ, վառեց լամպը, որի
մէջ դեռ մի քիչ նաւթ կար և աչք անցնել սե-
նեակի վրա. չը կայ արդեօք մի բան տանելու
և գրաւ դնելու: Բայց ինչ բան. նա երբ օր
առաջ վերաբնուն տարի գրաւ էր դրել մօ-
տիկ խառնութեամբի մօտ և քանի օր է անա
առանց վերաբնուն է ուսումնարան դնում:
Վերսվարը Տօ չէ՞ կարելի գրաւ դնել, առանց
այն էլ սենեակը չին տաքացնում. փայտ չը

թոյլ չեն տուել, որ թշնամու զօրքերը
մուտք գործեն մանջուրական ափերում:
Մենք մեծ վերապահութեամբ ենք վե-
րաբերվում հեռագրական գործակալու-
թիւնների լուրերին, սպասելով պաշտօ-
նական հարորդագրութիւններին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՆ

Փետրվարի 26-ին
Երէկ ակադեմիկոս Պ. Կորչը մի հրապար-
ական դասախօսութիւն կարդաց: «Ռուս ժո-
ղովրդական երգը և նրա նշանակութիւնը գի-
տութեան համար» — այս էր նրա դասախօսու-
թեան թեման:

Մեզ, հայերիս համար, հետաքրքիր է այս
առարկան և այն պատճառով, որ մենք էլ,
կամաց-կամաց մտնելով կուլտուրական ազգե-
րի շարքերը, սկսել ենք մեր ժողովրդական եր-
գը ուսումնասիրել, գրել և նօթաների անց-
կացնել: Իսկ թէ ինչ նշանակութիւն կարող է
ունենալ մեր այդ հետաքրքրութիւնը դէպի
ժողովրդական երաժշտութիւնը — այդ շատ գե-
ղեցիկ քննարկից ակադեմիկոս Կորչը:

Վերջին ժամանակներս, ասաց նա, շատ
որոշ կերպով արտայայտվում է ուսու հին եր-
գի անկումը: Շատ ուշադրաւ է հետազօտել
վերջինիս պատճառները:

Բոլոր ազգերի մէջ ժողովրդական երգը
ծաղկում-զարգանում է միայն այն ժամանակ,
երբ նրանց զանազան դասակարգերի մէջ չը
կայ կուլտուրական մեծ անջրպետ, երբ բարձր
գոտակարգը կամ արիստօկրատիան իր մտա-
ւոր-բարոյական պաշարով, կուլտուրական պա-
հանջներով շատ քիչ է տարբերվում հասա-
րակ ժողովրդից: Մեր ժամանակը, կըր այդ
երկու դասակարգերի մէջ բացվել է մի աննպա-
սելի վիճ, բնական է, որ ժողովրդական երգը

կայ, պատաւը առանց փողի փայտ չէ տալիս:
Դուրը բացվի. պատուս Աննան, աչքերը
ձմեռելով ներս մտաւ:

— Նը, փող բերելը վերջապէս:
— Ոչ, դէպի, դեռ չը ստացայ, խոտտացան
վաղը տալ, ստեղ Ներսէսը:

— Վաղը, վաղը, գիտեմ այդ վաղը ես չեմ
կարող սպասել, ես էլ խեղճ եմ, ես էլ տան
վարձ պէտք է տամ, անա բան օր է սպա-
սում եմ, էլ չեմ կարող: Վաղը կամ պէտք է
տաս, կամ դուրս գնաս:

Եւ, բարկացած, պատաւը իր ետեղից շառաչ-
մամբ փակեց դուռը:

— Ոչ, ոչ, յուզված ինքն իրան խօսեց Ա-
սողկեանը. պէտք է աշխատել վաղը անպատ-
ճառ փող գտնել:

Նա նորից պարզվեց տախտի վրա, նորից
սկսեց մտածել: Եւ նա մտաբերեց յանկարծ
մի սքանչելի հեղեթ, որ մայրը պատմում էր
իրան երեխայ ժամանակը:

Մի օր Հարուն-Ալ-Րաշիդ խալիֆը իր
ձափար վեղբրի հետ միասին, ծպտեալ, դէր-
վիշէ հագուստով, հիւր եկաւ մի աղքատ պա-
ռուս կնոջ տուն: Պատաւը սպրում էր իր 15
տարեկան թոռան հետ. նրանք շատ աղքատ
էին, շատ. պատանին ցերեկները գնում էր
բազար, այնտեղ մշակութիւն անում և աշխա-
տածով պահում իր տատան. սա էլ աչքի լոյսի
պէս սիրում էր թոռան, թոռն ունէր մի
գեղեցիկ աքար, որին կուսնում էր ուրիշ
աքարների հետ: Հիւրը աստուածանից է. հիւ-
րին պէտք է պատուել, այդ շատ լաւ գիտէր
պատանին, բայց տանը ոչինչ չը կար բացի
աքարից: Նրան մորթեց, տատը ճաշ եփեց և
մեծարեց հիւրերին, սպա անկողին գցեց նը-
րանց համար: Սալիֆը և վեղբրը հակադաս
ամեն բան. առաւօտեան վաղ մեկնեցին, թող-
նելով պատանու բարձր տակ մի յուլունքա-
պատ քսակ, լի ոսկիներով: Նա ամբողջ գիշեր
լացել էր ծածուկ իր սիրուն աքարի համար.
նա վարձատրվեց, հարստացաւ և գնեց աւելի
սիրուն աքարներ:

ճարտիչն է կարող, և ժողովրդական երգը չէ կարող այլ ևս լինել համագրային:

Եթէ դիմենք պատմութեան, կը տեսնենք, որ Ռուսաստանում ժողովրդական երաժշտութիւնը զարգանում է մինչև 17-րդ դարը: Ինչպէս այդ ժամանակ նա չունէր ամենին որ և է ուժեղ մրցակից, ուստի և ազատ կերպով տարածվում էր որպէս հասարակ ժողովրդի, նոյնպէս և ազնուական դասակարգի մէջ: 17-րդ դարում Ռուսաստան սկսեցին գալ եւրոպացիները, սկզբում լեհացիները և քաղաքացիները, որոնք ինքնակամ ռուսները, յետոյ հոլանդացիները, գերմանացիները: Այդպիսով եւրոպական ազդեցութիւնը տարածվում էր ուստի ժողովրդի վրայ, Պետրոս Մեծից զեռ շատ առաջ, որը վերջնական սանկցիա և հաւանութիւն ստեղծեց եւրոպական նորմուտութիւններին:

Ինչպէս էր սակայն եւրոպական երաժշտութիւնը մրցում ազգայինի հետ:

Ինչպէս միշտ, նոյնպէս և այստեղ, հետևողութիւնը սկսեց ծառայել զանազան արհեստագործներին, որոնք ապրում էին քաղաքներում և շփում էին բարձր դասակարգի հետ: Մասնաւոր թաղաքի ծառայողներն էին իրանց հետևողութեամբ պարոններին: Գիւղացի ծառան, որ ապրում է որ և է պարոնի մօտ՝ քաղաքում, անշուշտ լսում է նոր, «գիտական» երաժշտութիւնը և աշխատում է կամ մայր-կամայ իւրացնել: Բարձրում ապրող հասարակ ժողովուրդը նոյնպէս սկսում է սովել այդ մօտային երաժշտութեամբ: Այսպիսով նոր երգը քաղաքից մտնում է գիւղ: Վերջերս նոր երգի յաղթական մուտքը կատարվում է աւելի ինտենսիվ կերպով, շնորհիւ ուժեղացող պանդուխտների և ընդհանուր զինուորական շարժումների: Եւ անհատական հին երգը տեղի է առնում նորին, օտարին, և պահպանվում է միայն ձէսերի մէջ: Եթէ համեմատելու լինենք հին և նոր ուսու երգերը, կը նկատենք, որ հինը շատ աւելի գնահատանկեր է, քան նորը: Նոր երգը համարեալ բացարձակ լիբրա-քական է, մինչդեռ հինը պարունակում է իր մէջ և՛ զիւցազնեղութիւն, և՛ քնարերգութիւն, և՛ նոյն իսկ դրամայի սաղմեր՝ «կող» պարերի մէջ:

Ինչպէս ասացինք, 17-րդ դարը ուսու ժողովրդական երգի և բանաստեղծութեան կրիտիկական դարն է: Այնուհետև նրա զեռաց կանխում է նոր երգը, նոր սովորութիւնների, կեանքի արդիւնքը, և կամայ-կամայ յետ է մղում հինը: Եւ այժմ, երբ այդ կուր սկսվելուց անցել է ամբողջ երեք դար, հին երգը, մասնաւոր հին զիւցազնեղական երգը իր վերջին օրհասական քայլերն է ապրում:

«Կեր կացաւ ու գործացած, բարձր տակին գտաւ մի քսակ ի ռակիներով»,—մտածեց Աստուծանը: Ախ, ինչ լաւ կը լինէր, եթէ այդ հէքիաթը իսկապէս իրագործվէր այժմ. ինքն էլ քնով անցնէր, զարթնէր և յանկարծ գլխատակին գտնէր ռակիներով լի քսակ. դէ, Ներսէս, վեր առ, հասիր մուրազիդը, գնա ուսումը շարունակիր: Ինչպէս չէ կարող պատահել այդպիսի հրաշք. միթէ նրա համար, որ այժմ հրաշքներին այլ ևս չեն հաւատում:

Եւ յանկարծ Ներսէսի սիրտը լցվեց յուսով: Նա մի տեսակ ոգևորութիւն գգաց, մտայ մըտքերը անհետացան: Ե՛հ, ինչ եմ յուսահատվում, մտածեց նա. ամօթ չէ ինձ այս հասակում յուսահատվել. միթէ այլ խնամար գիշերին լոյս չէ յաջորդելու. միթէ փոթիկին չէ հետևում հանգստութիւն, խաղաղութիւն: Կուրկ պէտք է կեանքի մէջ, կուրկ, զիմարել: Եւ ես կը կըռււն, կը դիմարթեմ, ես ճանապարհ կը հարթեմ ինձ համար կեանքի մէջ:

Դուռը բացվեցին. ներս մտաւ Միքայէլը, Ներսէսի դասնակերը, նրա պէս մի ազբատ աշակերտ: Նա հանեց վերաբերուն.

—Ես եկայ միասին թէյ լսմելու. այ, փող ունեմ, 15 բուրլի ստացայ դասից մի ամսվայ համար, թէ՛ ք, թէ՛ ք. հը, ինչ ես կախել յոնքերդ:

—Ե՛հ, ինչ անեմ. դու գնե՛ 15 բուրլի ունե, ես 5-ն էլ չունեմ սենեակիս վարձը տալու և պատաւը վճարում է ինձ:

—Ես քեզ կը տամ. առ, վերցրու 10 բուրլի:

—Իսկ դու ինչ կանես:

—Չինգ բուրլով ես կը գնամ, մինչև տեսնենք Աստուած ողորմած է:

—Ո՛չ, ես չեմ ընդունի. ինչպէս կարող ես 5 բուրլով մի ամբողջ ամիս ապրել: Ա՛հ, Աստուած, այս էլ կեանք է, որ քաշում ենք:

Եւ նորից Ներսէսի դէմքը մուսկլից: Յանկարծ նա նկատեց Միքայէլի ձեռքում մի լրակ:

—Այդ ինչ թերթ է:

—«Մշակ» է:

Ջարմանալի է, որ ինչքան մօտենում ենք հիւսիսին, այնքան աւելի պինդ կերպով պահպանված ենք տեսնում հին զիւցազնեղութիւնը: Ով որ այժմ ուզում է զրի անցկացնել ուսու զիւցազնեղութիւնը, դիմում է գլխաւորապէս Արևմտահայկախ նահանգը:

Սակայն ինչն է պատճառը, որ հիւսիսում աւելի է պահպանվել զիւցազնեղութիւնը: Պէտք է ասել, որ զիւցազնեղութեան գոյութեան և ծաղկման համար անհրաժեշտ են ուրոշ պայմաններ, հող, և այդ պայմաններից ամենապլանտրն է կանգնած և հանդարտ կեանքը: Պարզ է, որ հիւսիսում կեանքը շատ աւելի հանդարտ և հանդարտ էր և է, քան միջին և հարաւային Ռուսաստանում, որոնք անհամեմատ աւելի ինտենսիվ շարժման մէջ են եղել:

Ուր կեանքը եղում է, այնտեղ մեռնում է ոչ միայն հին երգը, այլ մեռնում են և հին սովորութիւնները, մոռացվում են և աւանդութիւնները: Հիւսիսում մինչև այժմ պահպանվել են ուսու հին շորերը, հին սովորութիւնները, հին շխտութիւնները, բարձր ու վարձը, հին արտասանութիւնը, առողջութիւնը...

Նոր հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ այդտեղ էլ արդէն հինը արձատարվում է կամայ-կամայ և տեղի տալիս նորին:

Ռուս երգով սկսվել են հետաքրքրվել զեռ 17-րդ դարում, երբ անգլիայի Ռիչարդ Ջէյմսը գրի անցկացրեց մի քանի ուսու երգեր: 19-րդ դարում հրատարակվել են երգարաններ. 19-րդ դարի սկզբում հրատարակվել են երգարաններ ոչ միայն խօսքերով, այլ և երանակներով: Երանակները մեծ մասամբ գրում էին եւրոպացիները. եւրոպական մուզիկայի ազդեցութեան տակ նրանք յաճախ արձատարվում էին: Մինչև հաշակաւոր Միգրուսովի երևան գալը, տարածված էր այն կարծիքը, որ ուսու ժողովրդի մէջ կայ միայն միաձայն երգեցողութիւն,—մի հայացքը, որ անպայման սխալ էր:

Միգրուսովը ինքը գիւղացի, ձեռք բերելով երաժշտական լաւ կրթութիւն, կարողացաւ ճշգրիտ կերպով ըմբռնել ուսու ժողովրդական երգը և զրեց նրան այն բարձրութեան վրայ, որին նա արժանի է: Նա համոզվեց, որ ուսու ժողովուրդը ոչ միայն չէ երգում միաձայն, այլ և որ երգում է ուրիշ գամմաներով, որոնք բաւական տարբերվում են եւրոպականից: Երկրորդական երաժշտութիւնը շատ մօտ է ժողովրդականին և ունի նոյն գամմաները: Ուրքան էլ երգեցիկն աշխատում է իր ձէսերը, երգեցողութիւնը անարատ և ազատ պահել արտաքին ազդեցութիւնից, այնուամենայնիւ տարբար ազդեցի մէջ նկատելի է, որ աշխարհը:

—Տուր ինձ կարգամ:

—Լաւ, յետոյ կը կարգաս. տուցե՛ Միքայէլը նրան թերթը, այժմ ասա ամսավարը բերին:

—Գնա դու ասա, գուցէ պատաւը բեղանից բաշվի և ամսավարը տայ:

Միքայէլը դուրս եկաւ: Երբ մի երկու բուրլից յետոյ վերադարձաւ ուրախ-ուրախ, աւելով շուտով Աննան կը բերի ամսավարը»,—նա տեսա Ներսէսին ուստուսալիս, ցնծալի տրամադրութեան մէջ:

—Գիտե՛լ ես, ինչ է. ինչ է պատահել. չը լինի յանկարծ փող ես գտել:

—Գտել եմ, գտել, այ, տես:

Եւ մեկնեց Միքայէլին «Մշակ» համարը և մատով ցոյց տուցեց յայտարարութիւնները բաժնի, ուր տարված էր. «Մի ընտանիք հրաւիրում է վերջին դասարանի մի աշակերտ, հայոց լեզու դաս տալու երեխաներին»:

—Այ քեզ տրաքոց, ասաց Միքայէլը, աս ինչպէս եղաւ, որ ես չը նկատեցի այս յայտարարութիւնը:

—Բարեւոք, բարեւոք բերեց, բացազանչեց Ներսէսը. հիմա փրկված եմ: Ով գտե՛, գուցէ հարուստ ընտանիք է, ամսակտն 15—20 բուրլի տայ:

—Իսկ եթէ արդէն բռնված է տեղը:

—Ինչ ես ասում, վախեցած ասաց Ներսէսը. արք չէ որ յայտարարութիւնը այսօր է արդար վի: Բայց ճիշդ ես ասում, սիրելիս, ամբողջ օր է անցել. ինձ պէս խեղճ և քաղցած ընկերներ շատ կան:

Եւ նորից յուսահատ նա ընկաւ տախտի վրայ:

—Բայց, Ներսէս, արե՛ փորձիր բարտոզուցէ՛ զեռ ազատ է. գնա հէնց այժմ, զեռ ժամանակը ուշ չէ:

—Այժմ չեմ կարող. վերաբերու չունեմ:

—Գիտեմ, գրաւ է զրված, բայց հոգ չէ, իմ հազիր և գնա, ես կը սպասեմ:

—Լաւ, յանկարծ վճարական կերպով ասաց Ներսէսը և ուղի ցատկելով, արագաբար հագաւ ընկերի վերաբերուն ու դուրս թռաւ սենեակից:

հային ժողովրդական երգը միշտ խորապէս արդում է երկրեցական երաժշտութեան վրայ: Ժողովրդի կեանքը, հոգեբանութիւնը արտացոլացել է նրա երաժշտութեան մէջ: Այդ հանգամանքը բոլորի համար այժմ պարզ է. կույտերական ազգերը ուշ ուշով գրի են անցկացնում իրանց ժողովրդական երաժշտութիւնը, կրեցողութիւնը: Եւ հետո չէ այն ժամանակը, երբ նրանց միահամուռ ջանքերի արդիւնքից կը ստեղծվի մի նոր գիտութիւն—համեմատական երաժշտութիւն, որին գուցէ վերապահված է համեմատական լեզուագիտութեան հետ ձեռք ձեռքի տուած շատ նոր գիտաբանի ապագայում, շատ նոր պրօբլէմներ պարզել ներկայ ազգերի կեանքից:

Պատմութիւն

Մարտի 1-ին Ազատարար Կայսրի մահման տարեդարձին, ինչպէս ամբողջ Ռուսաստանի բոլոր տեղերում, այնպէս էլ թիֆլիսում կատարվեցին հոգեբանագիտական Արժանաշիշտաւ Մեծ Կայսրի համար:

Մարտի 1-ին Պետերբուրգից թիֆլիս հասաւ Կովկասի կառավարչապետի օգնական ինֆանտերիայի գեներալ Ա. Ա. Յրեզէն:

«Մշակի» վաղվայ համարի հետ կողարկինք մեր բաժանորդներին ձերտալիս ուսու-եռայնական պատերազմի բեմի զարտեցը: Այդ բարեհաջող իրարի է ձեռք բերել և ստանձին, վճարելով կարգաւոր օրինակին 10 կոպէկ: Ուրիշ տեղերից պահանջողներին կարող ենք ուղարկել այն ժամանակ, երբ կը պատուիրեն ոչ պակաս քան տասն օրինակ և կը վճարեն զինք նախօրօք:

Մեզ հաղորդում են, որ ձմեռվայ վերջում տեղացած անձրեւների շնորհիւ, այժմ բաւականաչափ խոնավութիւն է գոյացել հողի մէջ և առ այժմ երկիւղ չը կայ, որ ցանքերը փաստվին ջրի պակասութիւնից:

Թիֆլիսի մրգաբուծական ընկերութեան վերջին նիստում, որ տեղի ունեցաւ երկուշաբթի, մարտի 1-ին, Արսէն Քալանթար կարգաց մի ղեկուցում միջոց չորացնելու գործընթացի մասին և ցոյց տուցեց գործնականապէս մի նոր գործիք, որ այժմ մեծ ընդունելութիւն է գրգորել Գերմանիայում և ուրիշ երկրներին այդ գործնական շրջաններում, գործիքը ունի հատարակ կազմութիւն և շատ յարմար է մանր

Պատու Աննան ներս բերեց մի թիֆլից սամվար և զրեց սեղանի վրայ ու յետոյ նստեց տախտի ճայրին: Միքայէլը սկսեց թէյ պատրաստել:

—Աստուած գիտէ, ասաց պատաւը, ես շատ խղճում եմ, բայց ինչ անեմ, ինքս էլ արքատ եմ, ինքս էլ երեխաների, որը թոռների աչք: Ա՛հ, խեղճի կեանքն էլ կեանք չէ. Աստուած մէկին այնքան է տալիս, որ արքաւում է աստուածութիւնից, միւսին այնքան չէ տալիս, որ ցամաք հաց ունենայ:

—Բայց էլի, մայրիկ, խեղճի լեզուն խեղճ կը հասկանայ, էլի խեղճ պէտք է խեղճին օգնէ:

—Լաւ ես ասում, որդի, բայց ասիք ձրտեղից օգնէ. ժամանակին էլ հայ-բրիտանականութիւն չէ փնտրել. եթէ օրերով քաղցած ու ճարտ փնտրել, մինը չի բանայ քո դուռը և չի հարցնի, այ կինի մտած ես, կինդանի ես: Ապրուստը ղեռնարկեց է, ամեն մարդ իր գլխի ճարն է ստանում: Ու՛հ, այս ինչ վատ եղանակ է, ոչ ձեռք է, ոչ անձրեւ. գուր Ներսէսը դուրս եկաւ, կարող է մրսել:

Միքայէլը մի բաժակ թէյ անց, տուցեց պատու Աննային, մինն էլ ինքը անց և մի կտոր շաքար վերցնելով, սկսեց կծով խմել:

Ջիւնախառն անձրեւ շարունակում էր ձեռնել ապակիները:

Կամպը սկսել էր արդէն արօտ լուսաւորել սենեակը. նաւթը վերջանալու վրայ էր:

Շատ շանցաւ անդուխներ լրա ոտնաքայլեր լավեցան, կայտաւ, առոյգ ոտնաքայլեր կեղուր, կարծես, ոտուներ էր գործում:

Միքայէլը վեր թռաւ տեղից. սիրտը բարստում էր սաստիկ: Նրան ծանօթ էր Ներսէսի գրութիւնը և վախեցում էր անշուղտութիւնից:

Դուռը շտապամբ բացվեց: Ներս թռաւ Ներսէսը և ուրախ-ուրախ բացազանչեց.

—Այդուքիւն, աշողութիւն, ուրախ, բարստ բերեց. դասը տուին ինձ, այն էլ ինչ գաս,—բանահինգ բուրլի ամսական, ամբողջ մի հարստութիւն: Վաղը մի ամսականն էլ կանխիկ կը տան:

անստուծութիւնների համար: Նրան կարելի է յարմարեցնել նաև տան մէջ, դնելով խոհանոցի պլիտայի վրայ և այդպիսով չորացնել տան այգիները մրգերը: Նոյն նիստում ցոյց տրվեց և միջոց մարբիւր մի գործիք, որ ունի աչքի ընկնող առաւելութիւններ մինչև այժմ յայտնի եղած գործիքներից:

Կովկասի իշխան Կառավարչապետը հրատարակել է երկու պարտադիր կարգադրութիւններ Ախալքալաք և Ախալցխա թաղաների համար, որը ինչպէս արդէն մենք հաղորդել էինք, մոցնվում է լատացարձ պահպանութիւն: Այդ կարգադրութիւններից առաջինը մէջ կան հետեւել 7 կէտերը իրանց մանրամասն օրէնքներով. 1) Տները եկող և հետացողների մասին ոստիկանութեանը տեղեկութիւն հաղորդելու առիթով. 2) Տները մէջ ներքին կարգի վրա հսկելու մասին. 3) Այս պարտադիր կարգադրութիւնը կատարելու երանակները քաղաքում անշարժ կայքեր ունեցողների կողմից. 4) Դոնապանների պարտականութիւնների մասին. 5) Դոնապանների հերթապահութեան մասին. 6) Պարտադիր կարգադրութիւնը չը կատարելու պատասխանատուութեան մասին. 7) Նրա գործադրութեան մտնելու ժամանակը—որ է 1904 թիւ ապրիլի 2-ը: Երկրորդ պարտադիր կարգադրութիւնը պարունակում է իր մէջ 6 յօդուած, որոնցով արգելվում է Ախալքալաք, Ախալցխայի և Բորչալուի գաւառներում զէնք ծախելու անց նախօրօք գրաւոր թոյլտուութեան ոստիկանութեան կողմից: Այս երկրորդ կարգադրութիւնն էլ մտնում է գործադրութեան ներկայ մարտի 15-ից:

Թիֆլիսի Միքայէլին հիւանդանոցի կառավարչի տեղապահը, զիմելով կայսերական բժշկական ընկերութեան վարչութեան, յայտնում է, որ Կուր գետի ափին, հիւանդանոցի հոգեկան հիւանդների բաժնին կից, մօտաւորապէս 30 սոսժէ երկարութեան վրայ, կատարվում են փորումները թիֆլիսի Աննիմ ընկերութեան էլէքտրական կայսրանի համար խողովաներ անցկացնելու նպատակով: Կատարված փորումներին փնտրել են, ի միջի պլոց, նախկին ջրհանի և հողեկան հիւանդների բաժնի արտաքնոցի խողովաները: Հիւանդանոցի վարչութիւնը թէ է խողովել Աննիմ ընկերութեան ներկայացուցչին դադարեցնել գործը և հեռանալ, սակայն նա մերժել է այդ պահանջը, ասելով, թէ ինքը փորումներ է անել տալիս, համաձայն այն յատակագծի, որը քաղաքային վարչութեան հաւանու-

Եւ փաթեթավորվ Միքայէլի վզով, նա համբուրեց նրան:

Միքայէլն ևս սկսեց ուստուսալ:

—Ի՛նչ շուտ, Միքայէլ, այժմ համաձայն եմ վերցնել քո 10 բուրլին, վաղը կը վերադարձնեմ. այժմ գնա, մի բիշ պատու, մի բիշ լաւ պանիր, մի ձեռնակ լաւ հաց առ, բեր թէ՛ ք անեք. մի շիշ գինի էլ անե՛ք, հը, ինչ ես ասում:

—Ո՛չ, Ներսէս, ասաց Միքայէլը լըժօրէն, հագնելով վերաբերուն, որ նոր հանել էր Ներսէսը. գինին արդէն շապուտութիւն է և, վերջապէս, չէ որ մենք հակա-ուրօհական ընկերութեան կողմնակից և անդամ ենք:

Մի քատորդ ժամից յետոյ փոքրիկ սենեակում, սեղանի վրայ զրված էր թարմ լաւաշ, պանիր, պտուղ և երկու ընկերները թէյ էին խմում ու ուրախ-ուրախ զրոյց անում, նորա-նոր ծրագրերը կազմում ապագայի մասին: Ներսէսը կանչեց և պատու Աննային ու նրան ևս պտղով մեծարկելով, տուցեց նրան հինգ բուրլին Պատաւը մեկնեց ուրախացած և օրհնելով:

Մեկնելիս Միքայէլը ասաց.

—Լսիք, Ներսէս, վաղը երեկոյեան, մենք պէտք է գնանք ախիկին Ա. ի մօտ. վաղուց դու նրա երեկոյեանին չես գնում. նա նեղացած է քեզանից. այնտեղ հետաքրքիր խօսակցութիւններ են լինում, մեր ընկեր գիտնալիստներից շատերն ևս յաճախում են: Երոյց թափել վերաբերու գրաւից և երեկոյեան միասին գնանք:

—Շատ լաւ, համաձայնեց Ներսէսը և երկու ընկերները բաժանվեցին իրարից:

Միքայէլի մեկնելուց յետոյ, Ներսէսը ուրախ յուզմունքից, երկար ժամանակ չը կատարեց քննել: Ապագան նրա երիտասարդ մտքի առաջ այժմ արդէն մտայն չէր երևում, այլ գեղափոխու էր և արդէն կիսաբան մօք բարի գեղքը և արդէն կիսաբան մրմնջաց. «Ես անպատճառ կուղարկեմ բրդէ շալը»:

